600.0311.01.12.06.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

01 դեկտեմբերի 2006 թվականի № 311 Ա
քաղ. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» №1Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1.1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 2.326 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 2.791 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) հզորության ամսական վճարը՝ 2168.55 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 2602.26 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

1.2. «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 10.391 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 12.469 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) հզորության ամսական վճարը՝ 387.07 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 464.48 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ) էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 15.540 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 18.648 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

1.3. «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 9.869 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 11.843 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) հզորության ամսական վճարը՝ 597.55 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 717.06 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

գ) էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 14.905 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 17.886 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

1.4. «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 4.750 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 5.700 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) հզորության ամսական վճարը՝ 372.45 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 446.94 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

1.5. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 4.463 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 5.356 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) հզորության ամսական վճարը՝ 260.08 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 312.10 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

1.6. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա) էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը (հաղորդման ցանց մուտք գործած էլեկտրաէներգիայի ամբողջ քանակի համար)՝ 0.927 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.112 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված

յուրաքանչյուր կՎտժ -ի համար՝ 0.927 դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.112 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը.

1.7. «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա) էլեկտրաէներգետիկական շուկային էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման հաստատագրված ամսական վճարը՝ 40.7813 միլիոն դրամ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 48.9376 միլիոն դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) էլեկտրաէներգիայի արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատորի ծառայության մատուցման սակագինը՝ 0,0955 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, առանց ավելացված արժեքի հարկի և 0,1146 դրամ՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ-ի համար, ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի հոկտեմբերի 29-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» փակ բաժնետիրական ընկերության կողմից էլեկտրաէներգետիկական շուկային ծառայության մատուցման սակագին սահմանելու մասին» № 136Ա որոշումը, 2005 թվականի նոյեմբերի 29-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների մասին» № 190Ա որոշման 1-ին կետի 1.1 և 1.5 ենթակետերը և 2006 թվականի մայիսի 31-ի «Էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների մասին» № 96Ա որոշման 1-ին կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2007 թվականի հունվարի 1- ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
01 դեկտեմբերի 2006թ.